Տասնմեկը գրել ենք, հազար տասնմեկը՝ մտքում...

ՊԱՇԱՐՎԱԾ ՄԱՐԴՈՒ ԽԱՌԸ ԽՈՀԵՐ

Չին մի բան է մտածում, հեծյալը՝ մեկ այլ բան։

ՋՈՆ ՌԾՑ

Նախ ճաշվենք գրված տասնմեկը. 1988 թ. փետրվարի 21-ի ռոռոյումը՝ մեկ: Սումգայիթը՝ երկու: «Զվարթնոց» օդանավակայանը՝ երեք: Հուլիսի 18-ը՝ չորս: Ասկերան-Թոջալու-Կիրովաբադ - Նուշի - Բաքուն՝ հինգ: Նոյեմբերի 24-ը՝ վեց: Պարետային ժամը՝ յոթ: Դեկտեմբերի 7-ը՝ ութ: Սումգայիթյան խայտառակ դատավարություն-ծաղրը՝ իներ: «Ղարաբաղ» կոմիտեի տղաների ապօրինի ձերբակալումը՝ տասը: Շրջափակումը՝ տասնմեկ (թե ինչ-որ բան բաց եմ թողել՝ ներող եղեք): Ավելացնենք նաև զանգվածային լրատվական բոլոր կենտրոնական (տես նաև՝ ազգրբեջանական, ժամանակ առ ժամանակ նաև՝ հայկական) միջոցներով շարունակվող հակաճայկական և հակադեմոկրատական հիստերիան (սա վերջվաբանական հասկացություն է) և կուենենք վերջին քսան ամիսների ընթացքում կենտրոնական ղեկավարությունից մեզ հրամցված ընծաների հիմնական տեսակները (բոլորդ էլ միտինգների մասնակցում եք, ուստի բացատրել-ապացուցել-համոզելու կարիքը չեմ զգում):

Հիմա՝ հազար տասնմեկի մասին: Ճիշտն ասած, թիվն ընդամենը խորհրդանշական-պայմանական է: Սակայն էությունը դրանից չի փոխվում: Ասել է թե՝ այն ամենը, ինչ դեռ մտցվելու-գալու է մեր գլխին:

Գալու է: Անխուսափելիորեն (էն վերևինները եկան, չէ՞...): Բայց այս անգամ պարտավոր ենք կանխատեսել: Պետք է պատրաստ լինենք: Կասեցնենք: Հակաճարված տանք: ՄԵՐ ՔԱՅԼՆ ԱՆԵՆՔ:

Հայաստան—Արցախ շրջափակման մեջ ենք: Զեռք մեկնող չունենք: Դեռգույն խորհուրդ՝ չունենք: Ապահովություն՝ չունենք: Նրաշխիք՝ չունենք: Ավտոճանապարհ՝ չունենք: Երկաթուղագիծ՝ չունենք: Թույր՝ չունենք: Վառելիք՝ չունենք: Ջեռ՝ չունենք: Ջուր՝ չունենք: Բոլորը հանրային սեփականություն է, ասել է թե՝ նաև մերն է, բայց մի պայծառ օր՝ ԻՍԻՔ Ո՞Վ ԵՔ ՈՐ... Ու մաքնոսյանական հերոսի պես պիտի սրանք դուռ ծեծենք. ՀԻՆԴ ԿՈՊԵԿ ՏԱ՞Ս...

Գորիս: 15 սեպտեմբերի, 1989 թ.:

Մայրաքաղաքն լարված իրավիճակները արագ և միակ ճիշտ զեղեցկանները են պարտադրում: Վճիռները: Դաղափարները, մեկնակետերը, վերջապե՞ս, արագ են ճանաչում: Բոլորը զգում են պաճի պատասխանատվությունը: Նորը ժամը աց արդեն կորցնում է իր հրատապությունը: Պատճառ-ձև-հետևանք կապը իր տեղն է ընկնում: Հիմա միայն երբ է պետք որոնել: Մեկտեղ: Համախմբված: Իշխանությանն հետ: Նոր բան չես ասի: Ո՞վ չգիտի գրի (սահմանադրություն, օրենք, որոշում, հրամանագիր) և իրականության հակասությունը: Ո՞վ չգիտի, որ, ասենք, Գորիս—Լաչին—Ստեփանակերտ—... ավտոճանապարհը, որը Քարտեզում 317 համարն ունի, համապետական ճանապարհ է և նրա պաշտպանությունն էլ, բնականաբար՝ համապետական խնդիր և գործ: Ո՞վ չգիտի, որ ավտոշարասյուները քարկոծելու, մարդկանց վիրավորելու համար անգամ քրեական գործեր են հարուցվել: Բայց ո՞վ չգիտի, որ բոլորն էլ անարդյունք են մնացել: Եվ ո՞վ չգիտի, թե ում կողմից: Ինչ պատճառներով:

Բոլորն էլ գիտեն: Բարեբախտաբար: Մենք զուցեցիք Ազարանի և Աշտարակի շրջաններից արդեն ութերորդ օրը Գորիս—Լաչին նանապարհին կանգնած, չգիտես ում ողորմածությանը սպասող մարդկանց հետ: Հենրիկ Սահակյան, Գևորգ Գևորգյան, Հրաչիկ Մովսիսյան... Աշտարակից եկած ընկերները՝ նկարիչներ, մանկավարժներ, նշեցին, որ տասներեքուսուկես կիլոգրամ... հեռագրեր են ուղարկել տարբեր հասցեներով՝ Գորբաչովին, Յազովին և այդպես՝ ներքև: Պատասխան չկա: Չի էլ լինի: Ես չեմ մեջբերում նրանց խոսքերը, քանզի ավա՜ղ, այնտեղ էլ նորություն չկա: Ասում են, օրինակ, որ ադրբեջանական կողմը բլոկադա չէր կարող կազմակերպել: Բոլորին էլ, բարեբախտաբար, պարզ է: Ասում են, որ ռուս մի սպա, ավտոմատով, մենակ, կանգնելով առաջին ավտոմեքենայի ոտնակին, կարողացել է մի ողջ շարասյուն անվնաս ուղեկցել այդ «կյանքի ճանապարհով»: Ո՞ւմ համար է գաղտնիք, որ ցանկության դեպքում դա այդպես էլ պետք է լիներ:

Ո՞վ չի կարող բացատրել, ենթադրենք, թե ինչու մեր ուղեփակոցի մոտ կանգնած խորհրդային զինվորը ընդամենը ռետինե դագանակով է, Լաչինի ուղեփակոցի մոտ կանգնածը՝ ավտոմատով:

Ո՞վ չի հասկանում, որ շրջափակում ասածը ընդամենը հրետանային պատրաստություն է:

Հիշենք Նալբանդյանին. «Հարկավոր է իմանալ, որ տերությունները ազգ չեն, և տերությանց շահը ազգի շահի հետ բնավ վերաբերություն չունի»: Եվ կամ՝ «Կեցցե կատուն, որ յուր փորի համար մուկ է բռնում»:

Էսպես:

Իսկ մեզ միշտ թվացել է, ավելին, համոզված ենք եղել, այսօր ամեն ինչ այլ է ու երևի թե դրա համար էլ մեր հիմքը սկսվում է հետևյալ. «Խորհրդային ազատ աշխարհ Հայաստան» խոսքերով (ի դեպ, սրա տակ ամենահարմարը, մեր ժամանակների համար ամենաբնորոշը՝ հատուկ շրջանի զինվորական պարետի ինֆորմացիան տպագրելն է. էն էլ ո՞ւր է՝ չկա վերջերս): Ու չգիտես ինչու մոռացել ենք կամ էլ չենք ուզում գիտակցել, որ մեր երկրում գործում է հետևյալ սկզբունքը. ԱՄԵՆ ԻՆՉ ՀՈՍՈՒՄ է, ՈՉԻՆՉ ՉԻ ՓՈԽՎՈՒՄ:

Հեքիաթում չենք ապրում, ոչ էլ մեր կյանքն անցնելու է հեքիաթներ լսելով, որ «հեփի-էնդ»-ի ու երեք խնձորի ակնկալիքն ունենանք:

Թեև անգամ այդ դեպքում էլ չպետք է պասիվ հայեցողի դերում լինենք:

Սևակի՞ն հիշեցիք: Ես էլ.

Ցած է ընկնում երեք խնձոր.
Մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին.
Մեկ էլ մեզ պես գիշեր ու զոր
Հիմարաբար սպասողին։

...Այսօր մենք մի շարք կարևորագույն խնդիրներ ունենք, որոնցից ստկայն միայն մեկի մասին կարող եմ հրապարակավ խոսել (մյուսներն ո՞վ չգիտի): Առջևում ՀԵՍՀ ժողովրդական պատվիրակների ընտրություններն են: Մեզ անհրաժեշտ է կազմավորել հիրավի ԱԶԳԱՆՎԵՐ, հիրավի ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ խորհրդարան: Այն, որ խնդրի առաջին մասը լիովին իրագործելի է, ցույց տվեցին դուրս եկած պատվիրակների փոխարեն կազմակերպված ընտրությունները, որոնց ընթացքում ժողովուրդը հիմնականում ճիշտ ընտրություն կատարեց: Իսկ ամենայն հայոց՝ այն իմաստով, որ խորհրդարանում ներկայացված լինեն ինչպես Արցախի մարզի, այնպես էլ ներքին ու արտաքին սփյուռքի պատվիրակները, քանզի հայոց խորհրդարանը պարտավոր է ընդունել որոշումներ, որոնք բխում են ողջ ժողովրդի (անկախ ապրելավայրից, դասակարգային, կուսակցական և կրոնական պատկանելությունից) շահերից, իսկ դրա համար բոլորի ներկայացուցչությունն էլ պարտադիր է:

Բազմիցս համոզվել ենք, որքան էլ չանանք, միևնույն է, ՍՈՒՏ ՔԱՆՈՆՈՎ ՈՒՂԻՂ ԳԻՏ ՉԻ ՔԱՇՎԻ...

Ա. ՄՈՐԻԿՅԱՆ



Գորիս: Շրջափակում: Լուսանկարները՝ ՋԱՎԵՆ ԽԱՉԻԿՅԱՆԻ